ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/39

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «ԱՏԱ» ՍՊԸ-ի 26.10.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/39 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԱՏԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱՏԱ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 26.10.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, ՀՀ ՊՆ կարիքների համար «Տեղեկատվական վահանակների, խորհրդանշական նվերների, հուշանվերների, զինանշանի, դրոշների և ժամացույցների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթ:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային հայտ է ներկայացրել «ԱՏԱ» ՍՊԸ-ն, որի վերաբերյալ ստացել է ծանուցում, որ բեռնումն հաջողությամբ իրականացվել է:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 03.10.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից ընդունվել է և համարվել է ընդունելի հետագա գնահատման համար:

Գնահատող հանձնաժողովի 03.10.2017թ. թիվ 3 արձանագրության 2.2. կետի համաձայն՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտում փաստաթղթերը կցված չեն եղել և գնահատող հանձնաժողովը գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Ընկերությունը հայտնել է, որ մուտք գործելով www.armeps.am կայք և ուսումնասիրելով վերը նշված ծածկագրով ընթացակարգի կարգավիճակը, նկատելի է այն հանգամանքը, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի անվան կողքին «հայտ» անվանումով սյունակում առկա է ZIP անվանումով ֆայլ, որը ներբեռնելուց հետո չի բացվում, իսկ մնացած մասնակիցների հայտերը բացվում են:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2)պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազ մակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածը նվիրված է գնումներին մասնակցելու իրավունքին:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության

կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումը.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386 –Ն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է համակարգի հասկացությունը, ըստ որի համակարգը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգն է:

Ընկերությունը հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելիս՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ն ղեկավարվել է «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման ուղեցույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հունվարի 10-ի թիվ 7-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 17.05.2017թ. թիվ 219-Ա հրամանով, վերոհիշյալ ուղեցույցով սահմանված բոլոր գործողությունները հստակ և բարեխղճորեն կատարվել են, ինչը հավաստվում է նաև համակարգի իր կողմից գերերացված, համարակալված և Ընկերությանը ուղարկված ծանուցմամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ գտնում է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը չգնահատելը՝ համակարգի անկատարության հետևանքով, զրկում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ

խտրական հիմունքներով կազմակերպման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման, նրանց միջև մրցակցության խրախոսման հնարավորությունից և որպես հետևանք, խախտվում է Օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով երաշխավորված ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը:

Ընկերությունը 26.10.2017թ. ներկայացրած բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին չկայացած հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Տեղեկատվական վահանակների, խորհրդանշական նվերների, հուշանվերների, զինանշանի, դրոշների և ժամացույցների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթը, կամ

2. պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Տեղեկատվական վահանակների, խորհրդանշական նվերների, հուշանվերների, զինանշանի, դրոշների և ժամացույցների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթ հայտարարելու մասին որոշումը:

Ընկերությունը ի լրումն 26.10.2017թ. ներկայացրած բողոքի հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ Մ.Անանյանի 31.10.2017թ. ԳԲԽ-ՄԱ/1/[1186187]-17 գրության, հայտնել է, որ գրությամբ նշված խնդրի լուծման համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն, ուսումնասիրելով խնդիրը, տեղեկացրել է, որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով ընթացակարգին «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել կազմակերպության կողմից ներկայացված հայտի ոչ լիարժեք կոդավորման բանալիով: Հայտի փաթեթավորման գործիքը մասնակցի համակարգչում հայտը փաթեթավորելիս գեներացրել է բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար:

Ընկերությունը հայտնել է, որ համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության դիրքորոշումը հստակ չէ և կրում է սուբյեկտիվ բնույթ: Նախ, գրությունից հստակ չի երևում, ի վերջո, ստեղծված իրավիճակը արդյոք եղել է ընկերության մեղքով, թե առկա է եղել համակարգի խնդիր (այսինքն, ոչ լիարժեք կոդավորման բանալին պայմանավորված է համակարգի թերի աշխատանքով, թե ընկերության համակարգչի թերությամբ): Բացի այդ, բնական է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտում առկա խնդիրը ոչ ընկերության մեղքով լինելու պայմաններում անգամ համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությունը բոլոր միջոցներով պետք է փորձեր ստեղծված իրավիճակը ներկայացնել որպես «ԱՏԱ» ՍՊԸ-ի մեղքով ստեղծված իրավիճակ:

Ընկերությունը հայտնել է, որ եթե «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտի հետ կապված խնդիրը առաջացել է Ընկերության մեղքով հայտը սխալ ներբեռնելու պատճառով, ապա ինչպես կարելի է բացատրել այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. թիվ 3 արձանագրության պարզել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտում փաստաթղթերը կցված չեն եղել, այսինքն ZIP անվանումով ֆայլը ընդհանրապես կցված չի եղել, սակայն երեք օր անցանհասկանալի պատճառներով www.armeps.am համակարգում հայտնվել է ZIP անվանումով ֆայլը, որը ներբեռնելուց հետո չի բացվում: Ընկերությունը հայտնել է, որ վերոհիշյալը ուղղակիորեն վկայում է, որ առկա է եղել www.armeps.am համակարգի խնդիր:

Ընկերությունը հայնտել է նաև, որ 23.10.2017թ. www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի 2017թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1.2 որոշման համաձայն՝ ՀՀ ՊՆ կարիքների համար «Տեղեկատվական վահանակների, խորհրդանշական նվերների, հուշանվերների, զինանշանի, դրոշների և ժամացույցների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ չափաբաժիններով որպես հաղթող մասնակից է ճանաչվել «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն, որի հետ նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1.2 որոշմամբ որոշում է կայացվել կնքել պայմանագիր՝ անգործության ժամկետը ավարտվելուց հետո: Անգործության ժամկետը կասեցվել է՝ նշված ընթացակարգի մասով ՀՀ գնումների բողո-

քարկման խորհրդին 25.10.2017թ. «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից բողոք ներկայացնելու արդյունքում:

Սակայն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 24.10.2017թ. կայացրած ՍՑ-ԱՄ-2017/66 որոշմամբ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն ներառվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշումը կայացնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

Ընկերությունը հայտնել է, որ 29.03.2016թ. «ՖԼԵԾ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով նույն փաստական հանգամանքների պայմաններում հայտնել է, որ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն 17.03.2016թ. ճանաչվել է ՀՀ պաշտպանության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ընթացակարգի հաղթող մասնակից, սակայն մինչև «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելը 22.03.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշմամբ վերջինս ներառվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ելնելով վերոգրյալից՝ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել գնահատող հանձնաժողովի «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 11.04.2016թ. թիվ 28/6 որոշմամբ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի բողոքը բավարարել է, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ընթացակարգի հաղթող մասնակից «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի հետ մինչև պայմանագիր կնքելը վերջինս 22.03.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշմամբ ներառվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ուստի ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի մասնակցությունը տվյալ ընթացակարգին դադարեցրել է՝ դադարեցնելով գնահատող հանձնաժողովի վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի 11.04.2016թ. թիվ 28/6 որոշմամբ արձանագրված իրավիճակը նույնականորեն առաջացել է նաև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում, մասնավորապես, 23.10.2017թ.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման

հարցման միջոցով մրցույթի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ չափաբաժիններով որպես հաղթող մասնակից է ճանաչվել «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն, սակայն մինչև վերջինիս հետ պայմանագիր կնքելը, այսինքն անգործության ժամանակահատվածում, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 24.10.2017թ. կայացրած ՍՑ-ԱՄ-2017/66 որոշմամբ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն ներառվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշումը կայացնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

Ընկերության կողմից որպես վերը նշվածի իրավական հիմնավորում նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23 կետի համաձայն գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդև 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման գործընթացը իր մեջ ներառում է նաև պայմանագրի կնքման և պայմանագրի կատարման փուլերը, իսկ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն գնման գործընթացի պայմանագրի կնքման փուլում, մինչև վերջինիս հետ պայմանագիր կնքելը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 24.10.2017թ. կայացրած ՍՑ-ԱՄ-2017/66 որոշմամբ ներառվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշումը կայացնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով, հետևաբար, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները և հաշվի առնելով Օրենքի 2-րդ հոդվածի 23 կետի և Կարգի 4-րդ կետի սահմանումները, ուստի Ընկերությունը գտնում է, որ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն իրավունք չունի շարունակել մասնակցելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին, ուստի և պետք է դադարեցնել գնահատող հանձնաժողովի վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը կամ արգելվի պատվիրատուին կնքել պայմանագիր «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառված «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի հետ:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը ի լրումն 26.10.2017թ. բողոքով ներկայացրած պահանջի խնդրել է Խորհրդին դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքվելու մասին որոշումը՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով, կամ արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նշված չափաբաժիններով:

Եվ որպես հետևանք՝ պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 31.10.2017թ. ժամը 11:30-ի և 07.11.2017թ. ժամը 11:45-ի նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր

ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը, ինչպես նաև Խորհրդին հայտնել է, որ բողոքով բարձրացված խնդրի հետ կապված Ընկերությունը գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ Խորհրդին ներկայացնելով այդ գրության պատճենը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Ի պատասխան Խորհրդի 26.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/19383-17 գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 31.10.2017թ. թիվ ԴՎԱ/3877 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ներկայացված բողոքի վերաբերյալ դիրքորոշում և Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հայտերիր բացման նիստի ընթացքում պարզ է դարձել, որ Ընթացակարգին հայտ ներկայացրած «ԱՏԱ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտին որևէ փաստաթուղթ կցված չէ և գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատելու հնարավորություն չունի: Սույն ընթացակարգին հայտ են ներկայացրել նաև «Մաքս Պրինտ», «ՎԱՆԵ», «Սաքի» և «Սմարթլայն» ՍՊԸ-ները, որոնց էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգով նախատեսված ապրանքների ձեռքբերումը նախատեսված է 2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար և Ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում ուղղակի հնարավորություն չի լինի նոր ընթացակարգ սկսելու և ավարտելու համար:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը ենթակա չէ բավարարման, քանի որ ինչպես բողոքաբեր կազմակերպությունն է նշել խնդիրը կապված է armeps համակարգի հետ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 31.10.2017թ. ժամը 11:30-ի և 07.11.2017թ. ժամը 11:45-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Տեղեկատվական վահանակների, խորհրդանշական նվերների, հուշանվերների, զինանշանի, դրոշների և ժամացույցների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով www.arpeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել նաև «ԱՏԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից ընդունվել է և համարվել է ընդունելի հետագա գնահատման համար:

3. Գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.2 ենթակետով արձանագրել է, որ «Մաքս Պրինտ», «ՎԱՆԵ», «Սաքի» և «Սմարթլայն» ՍՊԸ-ների էլեկտրոնային հայտում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են, իսկ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտում փաստաթղթերը կցված չեն՝ գնահատող հանձնաժողովը գնահատելու հնարավորություն չունի:

4. «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի ընթացքը լուծելու նպատակով Խորհուրդը 31.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1186187-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

5. Ի պատասխան Խորհրդի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.11.2017թ. գրությամբ հայտնել է, որ դիմել է համակարգի

տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով ընթացակարգին «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել կազմակերպության կողմից ներկայացված հայտի ոչ լիարժեք կոդավորման բանալիով: Հայտի փաթեթավորման գործիքը մասնակցի համակարգչում հայտը փաթեթավորելիս գեներացրել է բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2017թ. ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքի 06.11.2017թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության 31.10.2017թ. թիվ ԴՎԱ/3877 գրությունը՝ առդիրներով, ՀՀ ֆինանսների նախարարության 01.11.2017թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 06 ապրիլի 2017 թվականի 386-Ն թիվ որոշման 4-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման ուղեցույցը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով***

<u>իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:</u>

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը*** կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Տեղեկատվական վահանակների, խորհրդանշական նվերների, հուշանվերների, զինանշանի, դրոշների և ժամացույցների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով www.arpeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել նաև «ԱՏԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից ընդունվել է և համարվել է ընդունելի հետագա գնահատման համար:

Գնահատող հանձնաժողովը 03.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.2 ենթակետով արձանագրել է, որ «Մաքս Պրինտ», «ՎԱՆԵ», «Սաքի» և «Սմարթլայն» ՍՊԸ-ների էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են, իսկ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտում փաստաթղթերը կցված չեն, ուստի գնահատող հանձնաժողովը գնահատելու հնարավորություն չունի:

Այսպիսով, «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի ընթացքը լուծելու նպատակով Խորհուրդը 31.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1186187-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Ի պատասխան Խորհրդի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.11.2017թ. գրությամբ հայտնել է, որ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով ընթացակարգին ***«ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել կազմակերպության կողմից ներկայացված հայտի ոչ լիարժեք կոդավորման բանալիով***: Հայտի փաթեթավորման գործիքը մասնակցի համակարգչում հայտը փաթեթավորելիս գեներացրել է բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար:

Այսպիսով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում <u>հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը</u>:***

Վերոգրյալով պայմանավորված՝ Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքներում բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է «ԱՏԱ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած երկրորդ պահանջին, այն է՝ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն իրավունք չունի շարունակել մասնակցելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին և պետք է դադարեցնել գնահատող հանձնաժողովի վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը կամ արգելվի պատվիրատուին կնքել պայմանագիր «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» (այսուհետև՝ Ցուցակ) ներառված «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի հետ, ապա սույն մասով Խորհուրդը գտնում է, որ բողոքը ևս ենթակա չէ բավարարման, քանի որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդև 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ*** ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ

«Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել ***03.10.2017թ.***, իսկ Ցուցակում ներառվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ***24.10.2017թ.*** կայացրած ՍՑ-ԱՄ-2017/66 որոշմամբ:

Միաժամանակ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման համաձայն՝ ***եթե մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ Ցուցակում, սակայն հայտը ներկայացնելուց հետո ներառվել է նշված ցուցակում, ապա վերջինիս հայտը այդ մասով ենթակա չէ մերժման***:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ